

ճանուխ, եթէ առանց ձգձգելու կարող է շուտ հասկանալի դառնալ իւր իսկական նշանակութեամբ: Դէպքից օգուտ քաղելը իմաստութիւն է, բայց հարկաւոր է որ դէպքը շինովի և բռնադատած չը լինի:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Ծարա-նակա-նի-ն):

Զ.

Տայլար.

Հոռոմոսից դէպի արեւելք, երեք վերստաչափ հեռաւորութեամբ Ախուրեանի պտոյտներից մի թերակղզու հրուանդանի վերայ, գտնվում է հիւսիսային կողմից հասարակ պարսպով պատած մի աւերակ գիւղատեղի և մի գեղեցիկ աւերակ գմբէթաշէն փոքրիկ եկեղեցի, որի հարաւային որմը քանդուած է: Ահա այս աւերակ եկեղեցին և գիւղն է որ կոչվում են Տայլար. Հ. Ալիշան կարծում է որ գիւղը, և հետեաքար, և եկեղեցին ամայացել է դարուս սկզբից լեկզինների ասպատակութեան պատճառով:

Ըստ ամենայն հաւանականութեան եկեղեցիս շինուած է Բագրատունեաց ժամանակով:

Եկեղեցուս անուանով կայ 615 դեռեատին հող, սեպհականութեամբ Հոռոմոսի վանքին, բայց մինչև այսօր արդիւնքը աննպատակ կորել է:

Է.

Կարէր լինէ՞ր Ղաչաճեան.

Տայլարից դէպի հիւսիս արեւելք, անցնելով Ղուլուջուղից, Թաղզայ գիւղից և Մատակից, մօտ վեց վերստ հեռաւորութեամբ:

Թեամբ է Կարօյն լան՝ գիւղը համանուն գմբէթաւոր եկեղեցւով: Եկեղեցիս հնացած է և գմբէթը քանդուած, բայց վերջին տարիներս վերանորոգուեց բոլորովին: Կարմիր վանքը համարվում է Նիրակայ Դպրեվանքը, որի վանահայրն էր Բարսեղ ձոն է. դարում, որ ներսէս Գ-ի հրամանով շարականների ընտրութիւնն արեց. ուստի և շարականները կոչուեցին ձոնեպիլ: Այսպէս ուրեմն, Կարմիր վանքը, եթէ համարենք Նիրակայ Դպրեվանքը, շինուած է առ նուազն եօթներորդ դարում և է Նիրակայ հնագոյն եկեղեցիներից մէկը:

Արձանագրութիւններից մէկը 1228 կամ ՈՀԵ Թուին է. իսկ միւսը որ աւելի հնագոյն է, վերաբերում է Ե-րդ դարին. այդ արձանագիրը գտնվում է արեւմտեան աւանդատան դռներից մէկի վերայ, ըստ ասելոյ Հ. Ալիշանի, և եղծուած տառերի մէջ դեռ կարելի է վերծանել ձոն Բարսեղ անունը:

Ը.

ՈՂԵՂԵՍ.

Եթէ Մաւրակում այժմ գտնուէին հնութեան հետքեր, հարկաւոր կլինէր, նախ քան Կարմիր վանքը, կանգ առնել Մաւրակի վերայ, որ հնումն կոչվում էր Նիրակաշատ. և Կարմիր վանքից հազիւ մի վերստ հեռի լինի բաժանուած համանուն գետով: Նիրակաշատը յանուն Մօրիկ կոյսեր՝ կոչուել է Մաւրիկուպօլիս, այժմ կրճատուած՝ Մաւրակ, հայաբնակ գիւղ: Բայց մենք զանց առնելով Մաւրակը, դիմենք դէպի Ուղուզլու հայաբնակ գիւղը, որի մէջ բաւական հեռուից երևում է հոյակապ եկեղեցին, եկեղեցիս շինել է ինչպէս դրսի կողմից հաւաքալին պատի վերայ արձանագրութիւնը ցոյց է տալիս, Գընթունի Խականի որդի, Հասանը, հաւանականաբար՝ Թ-րդ դարում. և նորոգել է Գէորգայ որդի Աշոտ իշխանաց իշխանը Փրկչի 1001 և հայոց ՆԾ. Թուին, ինչպէս ցոյց է տալիս արձանագրութիւնը: Եկեղեցիս բաւական հնացած և քայքայուած է:

Թ.

Շիրակահայկե (Բաշ—Շորապետ)։

Ուղղուելից դէպի հարաւ արեւելք, մօտ տասն վերստ հեռաւորութեամբ, գտնվում է Շիրակաւան կամ Երազգաւորս (Բաշ—Շորապետ) հայաբնակ գիւղը։ Շիրակաւանն է Բագրատունի թագաւորների նախաթուր։

Շիրակաւան յայտնի է պատմութեան մէջ վեցերորդ դարից (580)՝ ռակայն Շիրակաւանի պայծառութիւնը սկսվում է Թ. դարից, երբ Բագրատունիք իրանց ռոտան են դարձնում։ Շիրակաւանում էին կառարվում կաթուղիկոսների ընտրութիւնները, և շիրակաւանի Ա. և Բ. ժողովները, Բ. ժողովում, 862 թուին, որոշուեց չընդունել Քաղկեդոնի ժողովը։

Շիրակաւանի նախկին պայծառութեան հետքերից կան մի աւերակ՝ հիւսիսակողմը գտնվող ստրաւանդի վերայ, մի աւերակ եկեղեցի ևս՝ արեւելեան կողմը մի բլրակի վերայ, և մի հոյակապ, կանգուն, գմբէթը խոնարհած, բարձրագիւր եկեղեցի գիւղի մէջ՝ հիւսիսակողմը։ Հ. Ալիշան կարծում է որ այս եկեղեցին է Յովհաննէս Զ. կաթուղիկոսի նկարագրած եկեղեցին, որ 897 թուին շինել է Սմբատ Ա. Ս. Փրկիչ անուամբ, ուր և ինքն արքայական օծումն ընդունեց Գէորգ Բ. կաթուղիկոսից։

Եկեղեցիս նորոգել է ոմն Գնել, հաւանականաբար ԺԱ. դդ դարում։ Առաւտակութեանց ժամանակ եկեղեցին ծառայել է որպէս մարտկոց, և արեւմտեան կողմից կայ քարեայ սանդուղ, որ անջատ է եկեղեցուց, նեղութեան ժամանկներին, երբ հարկ է եղել ժողովրդեան ապաստանուել եկեղեցու կտրանը պատնէշների մէջ՝ սանդուղը միացրել են եկեղեցու կտրանը բացուած դրանը տախտակեայ կամուրջով, և այնուհետեւ վեր են առել կամուրջը։ Այժմ եկեղեցու մուտքը հարաւային կողմից է։ Եկեղեցին հնացած է. գմբէթը խոնարհած, անշուք և մութ, որովհետեւ երկիւղից փակուած լուսամուտները դեռ չեն բացուած։

Ժ.

Արգինյան

Շիրակաւանից դէպի արեւելք մօտ մի վերստ հեռաւորութեամբ Արալիս, և մօտ երկու վերստ հեռաւորութեամբ Ղարաքիլիսա թրքաբնակ գիւղերում կան հնութեան մնացորդներ, բայց այնքան էլ նշանաւոր չեն, հետեւաբար և մենք անհանգիստ չանելով նոցա վերայ բոյն դրած արագիւններին, թողնենք և Թիքնիզ հայաբնակ գիւղը իւր ամրոցով (ղուլա), որպիսին համարեա՞բոլոր հին գիւղերում կայ, շինուած ասպատակաւորներից պատասպարուելու համար, անցնենք դէպի Արգինա, որ Ալէքսանդրապօլից դէպի արեւմուտք է գտնուում 19 վերստ հեռաւորութեամբ և փոստի առաջին կայարանն է:

Արգինան այժմ արեւմտեան շիրակայ կենդրոնական վարչութեան (գաւառակապետի) բնակավայրն է և գտնուում է Ղարախանէ ու Կարս չայ գետերի միջև. հին Արգինայում այժմ կան մի քանի տուն ճաճիկներ: Ռուս աղանդաւորներն Արգինայից սակաւ հեռաւորութեամբ դէպ ի հիւսիս արեւելք շինել են իւրանց համար գիւղ: Կարս գետի ափին, հին Արգինային մօտ է Արգինայի հանքային ջուրը, որ իւր յաճախորդներն ունի թէ լուացուելու և թէ խմելու համար:

Արգինայում հայկական հնութեանց մի քանի մնացորդներ կան. բայց ամենից նշանաւորն է հոյակապ եկեղեցու հիւսիսային որմը գիւղի մէջ, որի հովանիքի տակ հանգստանում են Արգինայի արգարադատութեան դիւանին դիմողները, մինչև ունենդրութեան կամ հարցափորձի արժանանալը:

Արգինան բազրատունեաց ժամանակի նշանաւոր, պայծառ և շէն գիւղաքաղաքներից մէկն էր: Այստեղ վարեցին իրանց իշխանութիւնը և այստեղ վախճանեցին Անանիա և իւր քեռորդին Խաչիկ Ա. Կաթողիկոսները: Եկեղեցու հիւսիսային որմը յիշեցնում է թէ դա է կաթողիկոսական եկեղեցին, որ շինեց Խաչիկ առաջին կաթողիկոսը, Տրդատ ճարտարապետի ձեռքով յառաջ քան Անուշ կաթողիկէն: Ժ-որդ դարու վեր-

ջերում: Այս եկեղեցու որմը ներսի կողմից դեռ պահել է ար-
ձանագրութեան մի մնացորդ: Գլխէթի խարսխի վերայ:

ԺԱ.

Կարս:

Արգինայից դեռ մի վերստ հաղիւ անցած խճուղին մտնում է
Կարս գետի երկար և հեռու հետէ ձանձրալի դարձու անձուկ ձորը,
որ աւարտւում է եօթ վերստ տեղու թիւնից յետոյ Շահաղար
գիւղի կամրջով, որ ամէն տարի գարնանը քանդւում է և շին-
ւում: Թողնելով աջ կողմը Շահաղար, այժմ ռուս աղանդաւոր-
ներով բնակուած, գիւղը և ձախ կողմը նոցա գերեզմանոցը, որ
ոչ միայն ամբողջ Կարսի այլ և Երեւանի նահանգում իւր կանո-
նաւորութեամբ, մաքրութեամբ առաջին օրինակն է, անցնենք
ճանապարհը մինչև Կարս, որ Աղէքսանդրապոլից 86 վերստ
հեռաւորութեան վերայ է գտնւում. կանգ առնելու հարկ չը
կայ, որովհետև հնութեան հետքեր չըկան:

Կարսը՝ այժմեան Կարս նահանգի կենդրոնական քաղաքը,
հնումն Վանանդի մէջ էր գտնւում. քաղաքը շինուած է հա-
մանուն գետի աջ և ձախ ափին: Հին Կարսի միջնաբերդը գրո-
նւում է Կարսը գետի աջ ափին՝ մի ժայռոտ բարձր սարաւան-
դի վերայ. իսկ քաղաքը իւր պարսպով նոյնպէս գետի աջ ա-
փին: Կարսի թէ միջնաբերդի և թէ քաղաքի պարիսպները սրը-
բատաշ չեն, այլ կապոյտ կիսատաշ որձաքարերից են: Քաղա-
քի պարիսպը ունեցել է դռներ չորս հատ, մէկը դէպի արեւ-
մուտք, քարեայ կամրջի մօտ, որտեղից Գետի աջ ափին ժամա-
տան և ձախ ափին՝ Չուխուր մահլա հայաբնակ թաղերն են
սկսւում. մէկը բացւում է դէպի հարաւ՝ շուկայի վերայ, և
միւսը դէպի արեւմուտք, չըհաշուելով դէպի միջնաբերդը
բացուող դուռը՝ որ հիւսիսումն է գտնւում. այսպէս ուրեմն
քաղաքը իւր դռներով խաչաձև էր: Պարիսպները կրկնակ էին
և արեւելեան կողմից դեռ ցայսօր կայ խրամի հետքը:

Արեւմտեան և հարաւային դռները ունին արձանագրու-

թիւներ: Երկու դռներն էլ իրանց կամարներով նորոգուած են, հնուց մնացած քարերով, և այդ քարերը դրուած են ինչպէս պատահել է. մանաւանդ հարաւային դուռը, որ բացվում է շուկայի վերայ: Բաղմաթիւ և նուրբ քանդակները այժմ ոչ մի գեղեցկութիւն չեն ներկայացնում, որովհետեւ շարեւու ժամանակ համակարգութիւն պահուած չէ: Հարաւային դռն կամարը շինուած է ազնիւ կարմրաքարով, խաչերը ջնջուած են, ի հարկէ մահմետականութիւնը չէ հանդուրժել իւր տիրած քաղաքի դռներին խաչ տեսնել: Որովհետեւ այժմ քաղաքի պարիսպները կորցրել են իւրեանց նշանակութիւնը, ուստի և քանդվում են:

Կարսի մէջ հայկական հնութիւններն են Ա. պարիսպները վերանորոգուած հետզհետէ վրացիների և տաճիկների ձեռքով իրանց իշխանութեան ժամանակին. Բ. եկեղեցիքը, որոնցից ամենանշանաւորն է Առաքելոց կոչեցեալ եկեղեցին, որ շինել է Աբաս Թագաւորը Հայոց ՅՀԹ և Փրկչի 930 թուականին կապոյտ որձաքարից, այժմ այդ եկեղեցին ռուսաց ձեռքն է և կոչվում է բերդի մայր եկեղեցի, տաճկաց ժամանակ կոչվում էր Գիւմբէթ ջամի: Գ. Այժմեան Ս. Նշան եկեղեցին ազնիւ կարմրերանգ քարից շինուած. վաքրիկ բայց գեղեցիկ եկեղեցի է. շինութեան թուականը յայտնի չէ: Այս եկեղեցին մինչև ռուսաց տիրապետութիւնը մկրիթ էր և կոչվում էր Թառ—ջամի. կան և մի երկու եկեղեցիք, որոնց մինը յուռաց է յանձնուած, բայց նշանաւոր բաներ չեն և արձանագրութիւն չունին:

Հայոց այժմեան եկեղեցին վերաշինուած է Հայոց ՌՅ (1851) թուին քրդերից գնուած Անւոյ քարերով, և գտնվում է գետի աջ ափին, միջնաբերդի քարաժայռերի տակն: Յանուն եկեղեցւոյ անցեալ 1888 թուի աշնանը ստացուեց քաղաքական իշխանութիւնից 100 դեսետին վարելահող: Կաթուղիկաց եկեղեցին գտնվում է գետի ձախ ափին, չուխուր կոչուած մահլի ծայրին, Զահէ Ռէջ: Բագրատունեաց ժամանակով Կարսը ծառայել է որպէս Անւոյ հակաթու, և իւր զօրութիւն ու բարգաւաճումն եղել է ի վնաս Անւոյ: Կարսի հայ Բագրատունի թա-

գաւորութիւնը սկսուեց Աշոտ Գ. ողորմածի եղբայր Մուշեղից, որ թագաւորեց 961--994. հետզհետէ, թագաւորեցին Աբաս և Գագիկ, վերջինս 1064-ին Կարսը և իւր թագաւորութիւնը յանձնելով յունաց, առանձնացաւ Յմնդաւում, որ Կարսի փոխարէն ստացաւ Յոյներից: Յոյներից յետոյ մեծամեծ աւերներ և քանդմունքներ հասցրեց Կարսին Չարմաղանը, Լանկթամուրը՝ 1394 թուին, այնուհետև Վլայիք և Հաքարացիք: ԺԶ. դարում Օսմանցիք տիրեցին Կարսին (տես տեղագրութիւնք Հ. Ներսէսի Սարգսեան): Վերջապէս 1877 թուին ռուսները առնելով Կարսը օսմանցիներից միջոց տուին ժողովրդին խաղաղ կերպով ապրել և ճոխանալ վաճառականութեամբ:

Այժմ Կարսը սկսւում է կանոնաւորուել նորանոր շինութիւններով և պողոտաներով: Գաղթող բազմաթիւ տաճիկների տեղը բռնում են մեծ մասամբ հայք, Կարսում բնակողազգութիւններ են հայք, տաճիկ, ռուսներ, սակաւաթիւ հրէայ և յոյներ:

ԺԲ.

Խճիչնէջ լեւ+ Կոմ Բեշ—Գիւլեւո.

Կարսից մօտ 60 վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ գլորնւում է բէշքիլիսա կամ ըստ նախնեաց խճիօնը կոչեցեալ վանքը, Տիկոռոյ գետի ձախ ափին: Փոքրիկ տարածութիւն որ գտնւում է Տիկոռոյ գետի անդնդախոր ափամասների մէջ նորա պտոյտներ գործած տեղերը, զարդարուած է խճիօնից հինգ եկեղեցիների շինութեամբ: Այս հինգ եկեղեցիներից երեքը—հիւսիսից հարաւ Ս. Սարգիս, Ս. Աստուածածին և Ս. Կարապետ, համարեա կից են միմեանց. երկու առաջինքը բաւական ընդարձակ են, իսկ Ս. Կարապետը փոքրիկ մատուռ է: Միաբանութիւնը այս երեք կից եկեղեցիների մօտ է եղել: Տիկոռոյ գետի մի փոքրիկ պտոյտը փոքրիկ ժայռոտ հրուանդան գործելով յիշեալ եկեղեցիներից դէպի արեւելք մի տասնեակ սաժէն հեռաւորութեամբ տեղի է տուել Ս. Ստեփաննոս կոչուած

փոքրիկ բայց գեղեցիկ մատուռին, որ ըստ ամենայն հաւանա-
կանութեան գերեզմանոցի մատուռն է, շուրջ եղած գերեզ-
մաններում թաղուածների համար: Ս. Ստեփաննոսից դէպի
արեւելք 1/4 վերստ հեռաւորութեամբ համեմատաբար ընդար-
ձակ տարածութեան վերայ գտնւում է Ս. Լուսաւորչի մա-
տուռը, նոյնպէս աղօթատեղի իւր շուրջը թաղուած ննջեցելոց
յիշատակի համար: Ս. Լուսաւորչի բացի հարաւային կողմից որ
գետի հունն է և անմատչելի է, պարսպուած է սրբատաշ գե-
ղեցիկ պարսպով: Եւ որովհետեւ Խժկօնք զնալու համար նախ
Ս. Լուսաւորչի մօտից պիտի անցնենք, ուրեմն և այդ մա-
տուռից սկսենք:

Ա. Ս. ԼՈՍԱՎՈՐՉԻ.

Ս. Լուսաւորչիք ինչպէս ասացի պարսպապատ փոքրիկ վայել-
չաշէն և բոլորովին նոր մատուռն է, միայն գմէթի խաչը իւր
պատուանդանով չբկայ և կտուրը փոքր ինչ հնայած է: Ունի
սեղան պատարագի, մի հատ դուռն ունի հիւսիսային կողմից:
Պարսպի մէջ կան գերեզմաններ և մի մեծ խաչքար համարեա
մատուռի բարձրութեամբ: Գերեզմաններից մէկը և մեծը
պատկանում է Ալլ — Հասանի որդի Հաջալին, որ վախճանել է
1034 կամ Հայոց ՆՁԳ. թուականին և խաչքարի տակն է.
Եթէ Հաջալի յիշատակին չէ շինուած եկեղեցին ուրեմն աւելի
ևս հին է. բայց հաւանական է, որ Ալլ Հասանը ի յիշատակ
իւր վաղամեռիկ Հաջալ որդուն շինած լինի եւ խաչքարը եւ
մատուռը: Մի ուրիշ գերեզման ևս պարսպի հիւսիս արեւմը-
տեան անկիւնում պատկանում է Անեցի Գրիգորին որ վախճա-
նել է Հայոց ՈԶ. թուին (Փրկչի 1231 թ). պարսպի արեւելեան
կողմը ներսի կողմից կան փոքրիկ խաչքարեր և գրութիւն
անթուական:

Բ. Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ.

Ս. Ստեփաննոսը ինչպէս ասացի գետի մի փոքրիկ պտոյտով է
հեռի վանքից, մի դժուարագնաց հրուանդանի վերայ, միայն

մագլցելով կարելի է Ս. Ստեփաննոս գնալ. արևմտեան, հարա-
ւային և արեւելեան կողմը գերեզմաններ են: Ս. Ստեփաննոսն
նոյնպէս նոր է և միայն դմբէթի խաչը իւր պատուանդանով
չըկայ և կոտուրը հնացած է: Ս. Ստեփաննոսի և վանքի միջև
եղած փոքրիկ գոգաւոր պողոտը այժմ ծառազարդ գեղե-
ցիկ պարտէզ է և այցելուների զուարճութեան տեղ: Սանդղա-
ձե շաւիղները իրանց ծառերով հեազհետէ ցածանալով վեր-
ջանում են մի կրճով, որից յետոյ սկսւում է գետի ափին տա-
փարակի վերայ բանջարանոցը:

Պարտիզի և բանջարանոցի վերայ միակ հսկուղն ու իրաւա-
տէրն է տեղւոյն Յակովբ վարդապետ Մուրողեան, որ անխնջ
աշխատութեամբ անապատը դրախտ դարձնելով այդ դրախտի
մի անկիւնում մի խուղի մէջ անցնում է ամառը և սերովբէի
պէս պահում է իւր դրախտի մուտքը Ագամի օրկորաժէտ օր-
դինների առաջ:

Գ. Ս. ՍՊԵՒՆՆԻ.

Մտնելով վանքի բակը, դրան ձախ կողմը կրտսնէք մի գե-
ղեցիկ և շատ մեծ խաչքար, որ բարբարոսները աշխատել են
կործանել բայց չեն կարողացել, այլ միայն պատճառ են դարձել
դէպի յետ թեքուելու: Զարմանալի է թէ այդպիսի մի մեծ
խաչքար համարեա քանդուած հիմքով կորցնելով իւր հաւատա-
րակշռութիւնը ինչպէս չէ գլորուել իւր ետև գտնվող անդրն-
դի մէջ: Խաչքարից դէպի հարաւ հազիւ մի սաժէն հեռաւոր-
ութեամբ գտնվում է Ս. Սարգիս հոյակապ, շքեղ, և ըստ
ամենայն մատանց փառաւոր եկեղեցին. բոլորովին բոլորշի հիմ-
քի վերայ շինուած: Կանոնաւոր համաչափութիւնը և շինուած-
քի նրբութիւնը ապացոյց են շինել տուողի ճաշակի ազնուու-
թեանը և շինող վարպետի հմտութեանը:

Եկեղեցիս ինչպէս ցոյց է տալիս մեծ խաչքարին մօտ հիւսի-
սակողմն գտնուող արձանագրութիւնը, շինել է Վեստ—Սար-
գիս. նա՝ որ մի ամբողջ թագաւորութիւն կործանելով կարծել
է թէ մի եկեղեցի շինելով իւր մեղքերը կը քաւէ: Ազգը օտա-

ըին մատնելով՝ իւր ազգագրաւ միտքը անդորրացրել է այս գեղեցիկ տաճարի վայելուչ շինութեամբ: Այս տաճարի մէջ է կատարուում այժմ աստուածային պաշտամունքը:

Եկեղեցիս շինուած է Հայոց ՆՁԲ. և Փրկչի 1022 թուին Պետրոս կաթողիկոսի հայրապետութեան և Յովհաննէս—Սմբատայ թագաւորութեան ժամանակ. վերջին արձանագրութիւնը վերաբերում է Հայոց ՈՁԹ և Փրկչի 1240 թուին: Ս. Սարգսի դուռն հարաւից է:

Դ. Ս. Աստուածածին

Ս. Սարգիս եկեղեցուց տասն քայլ հեռաւորութեամբ դէպի հարաւ գտնուում է Ս. Աստուածածին եկեղեցին: Եւ խաչաձև է: Ամենահին եկեղեցին այս է համարւում. թէև բազմաթիւ արձանագրութիւններ կան, սակայն հնութիւնից անվերժանելի են: Այնուամենայնիւ եկեղեցին տասներորդ դարից ուշ չէ շինուած: Այս եկեղեցիս երեք դուռն է ունեցել, հարաւայինը յետոյ է փակուած հասարակ քարերով առանց շաղաղի. արեւմտեանը երեւի վաղուց, կոփածոյ քարով կրով. այս դրան ճակատին գրուած է «Այս դուռն Տեառն է և արդարք մտանեն ընդ սա»: Երեւի արդար չըգտնուելուն համար փակել են, որովհետև այդ դռնով էլ մտնող չէ եղել. հիւսիսային դուռն է բաց, որ բացւում է Ս. Սարգսի դրան հանդէպ: Ս. Սարգսի և Ս. Աստուածածնի եկեղեցիների միջև փոքրիկ տարածութիւնը արեւելեան կողմից որմնապատ է արած. տարածութեան մէջ տեղը մի մեծ հոր կայ, երեւի ցորեան կամ այլ ընդեղէն պահելու համար:

Ե. Ս. Կարապետ Ժողովուրդ

Ս. Աստուածածնին կից հարաւային կողմից գտնւում է Ս. Կարապետ կոչվող մատուռն, փոքրիկ նախագաւթով: Երեւի շինութեամբ ժամանակակից Ս. Սարգիս եկեղեցւոյն:

Խժկօնից կամ Բէշքիլիսայի վանքը հռչակ է ստացել Վեստ — Սարգսի Ս. Սարգիս եկեղեցու շինութեամբ. ինչպէս արձանագրութիւններից երևում է բաւական նուիրատուութիւններ են եղել: Առաջին պայծառութեան հետևող ամայութիւնից յետոյ վերջոսին շէնանում է Խժկօնք Զարարիա Սպասաւարի ձեռքով, որ, ինչպէս արձանագրութիւնն է ասում Հայոց Ոկ. և Փրկչի 1211 թուին այլազգիներից աղատում է իւր արեամբ. վերջին և ընդ երկար ամայութիւնից յետոյ վանքը սկսում է շէնանալ 1877 թուականից երբ ռուսները տիրելով Կարսի նահանգին՝ հայազգի զօրավար Լազարեանց յիշեալ վանքը յանձնում է Ալէքսանդրօպօլլի Մանուկեան Յարութիւն վարդապետին, յատկացնելով վանքին բաւական հող: Աստուծոյ յաջողութեամբ Յարութիւն վարդապետ գտնում է իրան արժանաւոր աջակից բազմաւաստակ մշակ Յակովբ վարդապետ Մուրատեանին: Սկսվում է վանքի վերանորոգութիւնը: Նախ և առաջ Ս. Սարգսի եկեղեցին մաքրվում է անասնոց աղբերից և սրբագործվում է լինել տեղի աստուածաշառութեան. այնուհետև հին քանդուած խցերի տեղը շինվում են խցեր, խոհանոց, տնտեսատուն ևլն. միաբանների պիտոյքի համար:

Վանքի տնտեսութեան հոգսը իբրև վանահայր՝ ստանձնել է Յարութիւն վարդապետ. իսկ շինութեան հոգսը՝ նորա միաբանակից Յակովբ վարդապետ, որ ի պահանջել հարկին թէ որմնագիր է, թէ հիւսն և թէ պարտիզպան: Եւ ահա անխոնջ աշխատութեան շնորհիւ տասնեակիւ տարուայ ընթացքում բաւական հարստացել է և ունի միջոց օրինաւոր կերպով կառավարուելու:

Վանքի պայծառութեան նպատում են և հանքային ջրերը, որ բաւական նշանակութիւն են ստացած Ալէքսանդրօպօլլում, Կարսում, Կալզուկում և մինչև անգամ Երևանի ջրթակայքում: Հանքային ջրերի երկու տեսակներ կան. առաջին պաղ ջուր որ խմելու համար է, և ինչպէս անձամբ փորձել եմ ստամոքսի հիւանդութիւններ ունեցողների համար՝ օգտակար: Նոքա՝ որոնք ոսկրային կամ այգւպիսի հիւանդութիւն չունին առանց

վնասի լուացվում են այս ջրի աւազանում որ գտնվում է վանքից դէպի արեւմուտք մօտ երեսուն—քառասուն սափէն հեռաւորութեամբ: Այս ջուրը բաւական առատ է. և եթէ բոլոր ակերից բլխածները ամիօրիուեն համարեա երկու վերջոյ թանձրութեան մի հոսանք կը կազմեն: Սոյն ջրի յատկութիւնն ունեցող մի ուրիշ ակ էլ, բայց աւելի զօրաւոր, կայ մի գոգաւոր ծործորում բաւական բարձրութեան վերայ, առաջինից $\frac{1}{2}$ վերստ հեռաւորութեամբ:

Այս երկրորդը այնքան առատ ջուր չունի. 20 կօպէկնոցի ծաւալով ջուր հազիւ արտաթորի, որովհետեւ երթեւեկութիւնը դժուար է դէպ ի այս ակը, ուստի և լուացուելու աւազան չունի, այլ ցանկացողները միայն ջուրը շիշերով տանում են խմելու համար: Ուրիշ յատկութեան ջրեր էլ կան, բայց հետազօտուած չեն: Այս ջրերը գետի ձախ ափին են:

Գետակի աջ ափին, վանքից մօտ մի վերստ հեռաւորութեամբ դէպ ի արեւմուտք գտնվում է ծծմբախառն երկաթաջուրը, որ թէեւ շատ տաք չէ, բայց այնուամենայնիւ ջերմակ է կոչվում: մարմնոյ բնական տաքութիւնն ունենալով: Այս ջրի համար աւազան է շինուած և վերան տախտակեայ փոքրիկ ծածկոյթ: Խճկօնից վանք յաճախողները այս ջրի մէջ լուացուելու համար են յաճախում:

Ամենայն տեսակ հիւանդ առողջանալու մոքով լուացվում է այդ ջրում, բարեբաղդաբար օգտուողները օգտվում են իսկ չօգտուողներն էլ մի առանձին վնաս չեն տեսնում: Երեւի, ջրի պակասը լրացնում են առողջարար օդն ու ջուրը և անդրադ կեանքը: Զրերի օրինաւոր վերլուծութիւնը կորոշէ Բէշքիլիսայի բաղդը: Մինչև այսօր դեռ Բէշքիլիսայի ջրերի վերայ պատշաճաւոր ուշադրութիւն դարձնուած չէ, և ճշտապէս որոշուած չէ թէ այդ ջրերն ինչ յատկութիւն ունին և որպիսի հիւանդութեանց օգտակար են:—Բէշքիլիսան առհասարակ բազմաջուր է. ամեն կողմից աղբիւր է հոսում:

Վանքը ունի ջրաղաց և 250 դեսիատին հող, (թէ՛ վարեւահող և թէ՛ արօտատեղի): Հնումը վանքի սաղայատակ կալը եղել է

Ս. Լուսաւորչի և Վանքի միջև բարձրացող ամառային լեռնակի վերայ որի մօտ են գտնանոցը և լին. արտերից դէպ ի այս կալը կայ շինած բաւական լայն և ցանցաւոր ճանապարհ, բայց այժմ խախտուած է:

(շարունակել)

Յ. Վ. Մ.

Անցեալ 1889 թուականին վախճանեցան երկու նշանաւոր եկեղեցականներ Եւրոպայում, որոց անուններն անճանօթ չեն հայ ընթերցողներին. առաջ են գերմանացի (քաթոլիկ) ուսուցչապետ երեւի Աստուածաբան Դեօլլինգէրն, որ բոլորեց Պապի անսխալականութեան դէմ և ֆրանսիացի երեւի քարոզիչ Բերտէն (բողոքական):

ԴԵՕԼԼԻՆԳԷՐ

— Ոչ միայն Բաւարիայի այլ և բոլոր Գերմանիայի պարծանք՝ իւր ընդարձակ աստուածաբանական հմտութիւններով երեւի ուսուցչապետ Դեօլլինգէրը ծնաւ 28 ին յետրուարի 1799 թուականին. 1826 թուականին հրաւիրուեցաւ ուսուցչապետ եկեղեցական պատմութեան և եկեղեցական իրաւագիտութեան Միւնխենի համալսարանում: Միւնխեն ժամանակ նա պետական խորհրդարանի անդամ էր և Բաւարիայի գիտութեանց ճեմարանի անդամ: Գերմանիայի քաղաքական կեանքի յուզուած ժամանակ 1848 և 1849 թուականներին Դեօլլինգէրը Ֆրանկֆուրտի պարլամենտի անդամ էր և ղեկավար քաթոլիկ կուսակցութեան: Այս ժամանակ նա իւր ճառերում և երկասիրութեանց մէջ ջերմեռանդ անդրադնական էր երեւում և այդպիսի մնաց մինչև իւր ճանապարհորդութիւնը հոգով 1857 թ. և հոգով տիեզերական ժողովը 1870 թուականին, ուր ընդունուեցաւ հոգով պապի անսխալականութեան վարդապետութիւնը, որոյ դէմ բողոքեց և մերժեց այն ուսուցչապետ Դեօլլինգէրը: 1872 թ. քաթոլիկ եկեղեցին բանադրեց նրան. բայց այս բնաւ չխախտեց ծերունի աստուածաբանի համոզմունքներն, և նա սկզբնապատճառ եղաւ հին քաթոլիկ կոչուած կուսակցութեան կազմակերպ, և զարթեց-